**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3**
**«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/249» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով լաբորատոր սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 «07» հոկտեմբերի 2022թ.-ից «12»-ը հոկտեմբերի 2022թ.-ը ժամը 12:00

Մասնակցում էին՝
*հանձնաժողովի նախագահ՝*
Ա. Գալստյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
*հանձնաժողովի անդամներ՝*
Ն. Միրաքյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Վ. Հարությունյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
*հանձնաժողովի քարտուղար՝*
Ա. Մկրտչյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

**1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/249» ծածկագրով ընթացակարգի շրջանակում** ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2022 թ-ի սեպտեմբերի 30-ին, ժամը 15:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2022 թ-ի հոկտեմբերի 3-ին, ժամը 15:00-ին, ավարտվել է 2022թ-ի հոկտեմբերի 3-ին ժամը 16:00:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցի անվանումը | Հասցե, հեռ. |
|---|---|---|
| 1 | ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ | Էլ. Հասցե՝ +37410380609, Հեռ: 010 380609 |
| 2 | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | Էլ. Հասցե՝ llawyer@c-e.am, Հեռ: 011878717 |
| 3 | Սավ Գրուպ ՍՊԸ | Էլ. Հասցե՝ savgrouptender@gmail.com Հեռ: +37494654066 |
| 4 | Ֆորտունա 84 ՍՊԸ | Էլ. Հասցե՝ fortuna8484@yandex.ru Հեռ: 091344414 |
| 5 | ԷՍԶԵԹ ՖԱՐՄ | Էլ. Հասցե՝ rima.nazaretyan@szpharma.am Հեռ: 011534556 |

**3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.**

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

| Չափ | Չափաբաժնի | Զբա | Ներկայացված | Նախահ | Վերջին առաջարկ | Մաս |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բունզենի կոլբա | 1 | ԹԱԳՀԷՄ ՍՊԸ | 12000 | 9995 | 20% | 11994 | |
| 6 | Թրթռաստենդ | 1 | ԹԱԳՀԷՄ ՍՊԸ | 800000 | 1125000 | 20% | 1350000 | Մերժված |
| 11 | Ձեռնոցներ միանգամյա, նիտրիլային L | 1 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 25000 | 9400 | 20% | 11280 | |
| 11 | | 2 | ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 25000 | 19600 | 20% | 23520 | |
| 11 | | 3 | ԷՍԶԵԹ ՖԱՐՄ | 25000 | 20800 | 20% | 24960 | |
| 12 | Ձեռնոցներ միանգամյա, նիտրիլային XL | 1 | ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 25000 | 14800 | 20% | 17760 | |
| 12 | | 2 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 25000 | 15000 | 20% | 18000 | |
| 16 | Ծավալաչափ կոլբ մեկ նիշով պլասմասե խցանով | 1 | ԹԱԳՀԷՄ ՍՊԸ | 9000 | 7483.34 | 20% | 8980 | |
| 17 | Ծավալաչափ կոլբ մեկ նիշով պլասմասե խցանով | 1 | ԹԱԳՀԷՄ ՍՊԸ | 15000 | 12483.34 | 20% | 14980 | |
| 18 | Ձեռնոցներ միանգամյա, նիտրիլային | 1 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 1750000 | 14000 | 20% | 16800 | |
| 19 | Ինֆրակարմիր սպեկտրաչափ | 1 | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | 15000000 | 12500000 | 20% | 15000000 | |
| 21 | Ձեռնոցներ S չափի | 1 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 72000 | 59400 | 20% | 71280 | |
| 22 | Ձեռնոցներ M չափի | 1 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 72000 | 59400 | 20% | 71280 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | Ֆիլտրի թուղթ 84*84 սմ | 1 | ԹԱԳՀԷՄ ՍՊԸ | 40000 | 35000 | 20% | 42000 | Մերժված |

Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

**4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Տեղեկատվություն ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելու և գնման ընթացակարգը կասեցնելու մասին.**

Ի պատասխան 06/10/2022թ. «ԵՊՀ» հիմնադրամի կողմից ուղարկված թիվ /1424-22 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է N 26/26/17471-2022 գրությունը՝ համաձայն որի տրվել է հնարավորություն գնահատող հանձնաժողովին վերագնահատելու «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի հայտը:

*Ընդունվել է որոշում. Կողմ՝3, դեմ՝ 0:*

**7. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին.**

07.10.2022թ. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին e-auction.am համակարգի միջոցով 19-րդ չափաբաժնի մասով տրվել է տեխնիկական բնութագրերի շտկման հնարավորություն (տես՝ թիվ 2 արձանագրության 6-րդ կետ):

**8. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին.**

10.10.2022թ.-ին «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից e-auction.am համակարգի միջոցով սահմանված ժամկետում ներկայացվել է շտկումները, սակայն դրանք կրկին չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերին: Մասնավորապես նոր շտկված տեխնիկական բնութագիրով ներկայացվել է «Diamond ATR տեսակի պարագայի հետ միակցված FTIR համակարգի չափսերը (LxխxB) **14x26x16սմ**-ը, սակայն «ԵՊՀ» հիմնադրամի կողմից հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ Diamond ATR տեսակի պարագայի հետ միակցված **FTIR** համակարգի չափսերը (LxխxB) **չպետք է գերազանցեն 16x31x13սմ**-ը, ուստի այս մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնման հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Բացի այդ, գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ ապրանքի հզորությունը պետք է լինի *110-240Վ, 60/50 hg*, իսկ սպեկտրալ տիրույթը *ZnSe 5300–600:* «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն որպես ապրանքի շտկված տեխնիկական բնութագիր ներկայացրել է ապրանքի հզորությունը՝ *110-240Վ, 60/50 hg*, սպեկտրալ տիրույթը՝ *ZnSe 5300–600*, որոնք նույն են, ինչը պահանջվել է հրավերի տեխնիկական բնութագրով: Սակայն

վերջինիս կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված The Cary 630 FTIR spectrometer ֆիրմային անվանմամբ Agilent Technologies արտադրողի պաշտոնական կայքում առկա տեխնիկական բնութագրի տվյալների համաձայն, վերոնշյալ ապրանքի հզորությունը կազմում է *100-240Վ, 50/60 Հց*, իսկ սպեկտրալ տիրույթը *ZnSe 5100-600* : Այսինքն՝ մասնակիցը որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացրել իր իսկ կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող բնութագրեր, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ այս մասով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնպես չի համապատասխանում գնման հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետով, որոշեց «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայցված հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**9. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել՝

| N | Մասնակցի անվանում | Չափաբաժնի համար |
|---|---|---|
| 1 | ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ | 1,16,17 |
| 2 | Սավ Գրուպ ՍՊԸ | 12 |
| 3 | Ֆորտունա 84 ՍՊԸ | 11,18,21,22 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**10. Տեղեկատվություն գնահատման արդյունքների և ամփոփման մասին.**

10.1. Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1,16,17,12,11,18,21,22-րդ չափաբաժինների համար և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 6, 23-րդ չափաբաժինների մասով, պայմանագիր չի կնքվել հիմնավորմամբ:

10.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ տեղեկագրում ԷԱՃ համակարգի միջոցով հրպարակել հայտարարություն չկայացած գնման ընթացակարգի մասին՝ 2,3,4,5,7,8,9,10,13,14,15,20-րդ չափաբաժինների համար:

10.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 19-րդ չափաբաժնի մասով, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու

որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**11. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.**

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և նույն հոդվածի 2-րդ մասը, որոշեց մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**12. Տեղեկություն՝ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:**

Անհրաժեշտության դեպքում «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/249» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի անգործության ժամկետի ավարտի հաջորդող աշխատանքային օրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝3, դեմ՝0:*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | Ա. Գալստյան | ստորագրություն |
| Անդամներ՝ | Ն. Միրաքյան | ստորագրություն |
| | Վ. Հարությունյան | ստորագրություն |
| Քարտուղար՝ | Ա. Մկրտչյան | ստորագրություն |